ԱՆՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՍԵԼՋՈՒԿ ԹՈՒՐՔԵՐԻ ՍՈՒՏՔԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶ

Միջնադարյան Ասիայի պատմագրության մեջ կարևոր տեղ է գրավում սելջուկների էթնոքաղաքական միավորման ծագման հարցը: Տարբեր տեսակետներ գոյություն ունեն այս հարցի վերաբերյալ: Ամենահիմնավորվածը այն կոնցեպցիան է, որի համաձայն սելջուկների ցեղային միավորումը կազմավորվել է 10-րդ դարում Սիրդարյայի միջին հոսանքի և Կարակիտայի նախալեռնային շրջանների թյուրքալեզու բնակչությունից: Այս խմբավորման հիմքը կազմում են օղուզ-թուրքմենները, որոնք քոչվոր և կիսաքոչվոր կյանք էին վարում: Հետագայում նրանց կազմը համալրվում է քոչվոր օղուզների և այլ ցեղերի հաշվին, որոնք ապրում էին Սիրդարյայի ներքին հոսանքում և Մավարաննահրի ու Խորեզմի հյուսիսարևմտյան շրջաններում[1]: 10-11-րդ դարերում օղուզները բաժանվեցին մի քանի խմբերի և բազմաթիվ տոհմերի: Պատմելով նրանց մասին՝ Մահմուդ Կաշգարին հիշատակում է հետևյալ ցեղանունները՝ կինիկ, բայանդուր, իվա, սալուր, աֆշար, բեկթիլի, բուկդուզ, ուրեգիր, բայաթ, յազգիր, իմուր, կարա-բուլակ, ալկա-բուլակ, իգդիր, թութիրկա, ալա-յոնդուլուդ, թյուգեր, ջեբնի, բաջանա, դվուվալդար և ջարուկլուդ: Նրա տվյալների համաձայն՝ օղուզները սկզբում 24 ցեղեր էին, բայց ավելի ուշ շրջանի հեղինակները, մասնավորապես Ալ-Մարվազին, հիշատակում է միայն 12 ցեղերի մասին: Աղբյուրների տարբերությունը, գուցե, բացատրվում էր նրանով, որ ցեղերը բաժանված էին երկու մասի՝ բուզուկ և ուչուկ, որոնք համապատասխանաբար կազմում էին նրանց բնակի աջ և ձախ թևերը: Նրանցից յուրաքանչյուրը բաղկացած էր 12 ցեղից, որոնք իրենց հերթին բաժանվում էին տոհմերի: Համաձայն օղուզական աղբյուրների՝ բուզուկները կոչվում էին «ավագներ», իսկ ուչուկները՝ «կրտսերներ»[2]:

Սկզբում «օղուզ» անվանումը օգտագործվում էր թյուրքալեզու ծագում ունեցող տարբեր խմբավորումների, հատկապես քոչվորների համար, որոնք կոմպակտ ծնով ապրում էին Սերձկասպյան շրջանում, Սիրդարիայի ներքին

---

[1] Атаджанов С.Г. Этническая история огузов Средней Азии и Казахстана, 1980, 79
[2] Атаджанов С. Г. Государство сельджукидов и Средняя Азия в XI-XII вв. М. Наука, 1991, 4-7

հոսանքում և Արալյան շրջանում: 11-12-րդ դարերում նրանք տարածվում են ժամանակակից Ղազախստանի և Միջին Ասիայի տարածքներում: Նրանց առաջխաղացումը օղուզների ուժեղ պետական կազմավորում ստեղծելու հետևանք էր, որի քաղաքական կետրոնը Յանգիկենտն էր Սիրդարյայի Արալյան ծով թափվելու տեղում: Օղուզների դաշինքը կազմվում է եկվոր և բնիկ տարրերից, սակայն այդ պրոցեսում կարևոր դեր էին կատարում թյուրքական ցեղերը:

11-րդ դարում օղուզները ստիպում են նահանջելու կանգարա-բաջանաղյան և մի քանի ուգրո-ֆինական ցեղերի և զբաղեցնում Մերձսիրդարյան տափաստանները, հարավային մերձարալյան և հյուսիս մերձկասպյան շրջանները: 200 տարի այս տարածաշրջանում քաղաքական տիտանությունը այս ցեղերի ձեռքին էր, որոնք կրում էին «յաբղու» տիտղոսը: Սակայն սիրդարյան օղուզների տերությունը 1054-1055թ. տապալվում է այն ցեղերի կողմից, որոնք մտել էին կիպչակների միավորման մեջ: Օղուզների մի հատվածը գնում է դեպի հարավային Ուկրաինայի տափաստաններ, Բալկանյան թերակղզի, Խորեզմի օազիս, Միջագետք և Խորասան: Մյուս մասը, որոնք կիսաքոչվոր և նստակյաց խմբերն էին, ժամանակի ընթացքում ձուլվում են հաղթողների հետ և համախմբվում Դաշթի-կիպչակի ցեղի շուրջը: Այս ժամանակաշրջանից «օղուզ» տերմինը անհետանում է Միջին Ասիայի և Ղազախստանի պատմության էջերից:10-րդ դարի վերջին և 11-րդ դարի սկզբին «օղուզ» հին էթնոանվանման փոխարեն օգտագործվում է «թուրքմեն» անունը: Սկզբում այսպես էին անվանվում օղուզների միայն մի մասը և թյուրքական մյուս ցեղերը, հատկապես կարլուկները և խալաջները: Նրանք զբաղեցնում էին Սիրդարյայի միջին հոսանքի ավազանը և «7 գետերի միախառնման վայրի» արևմտյան շրջանը: Ալ-Բիրունիի խոսքերով այս շրջանի շատ քաղաքներ 10-րդ դարի վերջին և 11-րդ դարի առաջին եռամսյակում անվանվում էին «թուրքմենական»: Ակնհայտ է, որ թուրքմեններ էին անվանվում նաև այն խմբերը, որոնք իսլամ էին ընդունել և ձուլվել օազիսների հողագործ բնակչության հետ: «Թուրքմեն» տերմինը ավելի հավաքական իմաստ է ձեռք բերում 10-11-րդ դարերի սահմանագծին, այն ժամանակ, երբ սկսվում են սելջուկների արշավանքները դեպի Միջին Արևելք և Հյուսիսային Խորասան: Ավելի շուտ, դա քաղաքական, էթնիկական, սոցիալական և այլ դեռ չբացահայտված մի շարք գործոնների արդյունք էր[3]:

---

[3] Кагаров Е.Е., Мусульманский мир 900-1150 вв. Кочевники и оседлые в средневековом мусульманском мире. 1981г. 2-7

Հայտնի է, որ 10-րդ դարի կեսերին օղուզ-թուրքմենական ցեղախմբերի մեջ տեղի է ունեցել բախում Սիրդարյայի միջին հոսանքում: Դրա հիմնական պատճառը մերձսիրդարյան տափաստանների արոտավայրերին և հողերին տիրանալու ցնկությունն էր: Այսպիսի հանգամանքներում առաջանում է սելջուկների տոհմը, որը ծագում էր կինիկ ցեղից: Կասկած չկա, որ այս անունը ծագում է Սելջուկի անունից, որն ապրել է 10-րդ դարի առաջին եռամսյակում[4]. 12-րդ դարի պատմիչ Զահիր ադ Դին Նիշապուրին գրում է, որ նրանք հզոր էին, կարող ու անհաշիվ հարստությամբ: Սելջուկները իրենց իշխանությունը աստիճանաբար տարածում են օղուզների և թուրքմենների մի մասի վրա և 10-րդ դարի վերջին 11-րդ դարի սկզբին նրանց դեմ պատերազմ սկսում: Հաստատվելով Կարատաուի լանջերին՝ նախկին Ջենդի շրջանում, սելջուկների ցեղային միավորումը պատերազմ է սկսում Յանգիկենտի օղուզների ղեկավարների դեմ: Սելջուկները, մահմեդականություն ընդունելով, դուրս են գալիս յաղուբների դեմ՝ անհավատների դեմ «սրբազան պատերազմ» (ջիհադ) գաղափարախոսության անվան տակ 1001-1002թթ: Սակայն ուժերը անհավասար էին և սելջուկները գնում են Միջին Արևելք, հետո Խորեզմ և Հյուսիսային Խորասան: Սելջուկների պետության կազմավորումից հետո Տուղրիլ-բեկը և Չողրի-բեկը ջախջախում են սիրդարյան օղուզ-թուրքմեններին: Իսլամ ընդունելուց հետո նրանք, բնականաբար, չէին կարող անվանվել իրենց ենթակա օղուզների անունով: Այս էթնոսի անունը ասոցացվում էր Սիրդարիայի, Մերձարալյան և հյուսիսային մերձկասպյան հեթանոս քոչվորների հետ: Փաստորեն, օղուզ բառի անհետացմանը նպաստում է նաև այն փաստը, որ սելջուկները աստիճանաբար ձուլվել էին զավթված բնակչությանը[5]:

Պատմագրության մեջ փորձեր են արվում միմյանց հակադրել օղուզների և թուրքմենների կենցաղային կյանքը: Իհարկե, գոյություն ունեն որոշ տարբերություններ. գուցե թուրքմենների շրջանում նստակյաց և կիսանստակյաց բնակչությունը ավելի է գերակշռում, քան օղուզների մոտ: Սակայն սուր հակասություն չի կարելի տեսնել: Օղուզների և թուրքմենների գլխավոր զբաղմունքը անասնապահությունն է: Վկայություններ կան այն մասին, որ 12-րդ քոչվորների հետ միասին ապրում էր նաև նստակյաց և կիսանստակյաց բնակչություն: Ալ-Իդրիսին, խոսելով թյուրքերի մասին, ասում է.«Նրանք քոչվոր էին, բայց զբաղվում էին նաև հողագործությամբ»: Հողագործական տնտեսությունները աղքատ էին, հազիվ էին բավարարում իրենց կարիքները: Աղբյուրներում տվյալներ չկան

---

[4] Տիգրան Գոյումջյան, Մխիթար Սեբեցին Ղազնևիների և սելջուկների մասին, Էրաբեր հասարակական գիտությունների Եր. 1972, N 4, 27-84

[5] Агаджанов С.Г. Очерки истории огузов с IX по XIII в. Ашхабад, 1969, 67:

այն մասին, թե ինչ հուլագործական մթերքներ էին վաճառում կամ փոխանակում, և հակառակը, խոսվում է արծաթի տեղափոխման մասին, հատկապես Յանգիկենտ քաղաքում: Փաստորեն, ուսումնասիրվող ժամանակաշրջանում օղուզները և թուրքմենները միայն քոչվոր անասնապահներ չէին[6]:

10-11-րդ դարերում օղուզ-թուրքմենական միավորումը գտնվում էր զարգացման վաղ ֆեոդալական փուլում: Վերնախավը կազմում էին յաբղուները, բայղուները, խաները: Այս ցեղամիավորման շրջանում առաջացավ մահմեդական շերտավորում: Սիրդարյայի ներքին հոսանքի և Մերծարալյան օղուզների հիմնական զանգվածները շարունակում էին հեթանոսական մնալ: Իսլամը ավելի լայն տարածում գտավ Սիրդարյայի միջին հոսանքներում:

Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ 10-11-րդ դարերում օղուզ-թուրքմենների շրջանում վաղ ֆեոդալական ինստիտուտները բավականին զարգացած էին: Իհարկե, ֆեոդալական հարաբերությունների զարգացման գործում շատ մեծ նշանակություն է ունեցել Սելջուկներ թուրքերի դինաստիայի կազմավորումը: Սակայն պետք է նշել, որ սելջուկների միավորման մեջ մտնող թյուրքալեզու ցեղերը ունեին իրենց քաղաքական ինստիտուտները և պետական ավանդույթները: Ալ-Իդրիսին մատնանշում է մի շարք տիրույթներ, որոնք ղեկավարում էին օղուզ «թագավորները» (մուլյուքները): Սալիքները ստեղծում էին հատուկ զորքեր, որոնք պետք է պաշտպանեին տիրույթների սահմանները: 9-11-րդ դարերում գոյություն ունեցող օղուզների պետությունը՝ Յանգիկենտ կենտրոնով, մյուս տափաստանային էթնոքաղաքական միավորումների նման միածույլ պետություն չէր: Օղուզական պետության գլուխ կանգնած էր գերագույն ղեկավարը, որը կրում էր յաբղու (ջաբղու) տիտղոսը[7]: Յաբղուի իշխանությունը ժառանգական էր, սակայն պաշտոնապես ամրագրված էր, որ այն ընտրովի պաշտոն էր:

Բերված պատմական փաստերը ապացուցում են, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում օղուզները և թուրքմենները հասարակ զավթիչներ չէին: Դրա հետ մեկտեղ չպետք է ուռճացնել նրանց սոցիալ-տնտեսական և քաղաքական կառուցվածքը: Անկասկած, օղուզ-թուրքմենական միավորման զարգացման մակարդակը ավելի ցածր էր, քան Միջին Ասիայի, Իրանի և հյուսիսային Աֆղանստանի օազիսների հողագործ բնակչության զարգացման մակար-

---

[6] Cahen Cl. Le Malik-nameh et l'histoire des origines Seldjukides. Oriens. 1. 1965. 9-22

[7] Կան նաև հեղինակներ, որոնք պնդում են, որ ղեկավարները կրում էին բայղու տիտղոսը: Այս երկու տիտղոսների ծագումնաբանական կապը հատուկ ուսումնասիրության կարիք ունի: Յաբղուն բացատրական բառարաններում թարգմանվում է բազե: Մի խումբ հետազոտողներ այն համարում են քուշանական, մյուսները՝ թոխարական կամ էլ հին իրանական:

դակը: Սակայն դա չի կարող հիմք հանդիսանալ, որ Սելջուկյան տերության ծագման և կազմավորման մեջ անտեսվի նրանց դերը:

10-րդ դարի վերջին Միջին Ասիան գրավվել էր թյուրք Կարախանյանների կողմից: Սամանյանների տերությունը, որտեղ առաջացել էին սոցիալական հակասություններ, թուլացել էր զավթիչների հարվածներից, բայց Միջին Ասիայի համար կռիվները դադարում են միայն 11-րդ դարում: Այս թեժ իրադարձություններին մասնակցում էին նաև օղուզ-թուրքմենները Սելջուկի և նրա որդի Իսմայելի գլխավորությամբ: Սելջուկը Բուխարա է ուղարկում բանակ Իսմայելի գլխավորությամբ, որ օգնի Սամանյան ղեկավար Նուհա իբն Մանսուրին: Շնորհիվ նրանց Սամանյաններին հաջողվում է վերադարձնել իրենց պետության մայրաքաղաքը: 1003թ -ին վերջին Սամանյան Աբու Իբրահիմ Մունթասիրը օղուզների օգնությամբ Սամարղանդի մոտ պարտության է մատնում Կարախանյանների բանակին: Չնայած դրան՝ նա շուտով նահանջում է Ամուդարյայից այն կողմ և փախչում Մերվ: Հաջորդ տարվա գարնանը նա կրկին հայտնվում է Միջին Արևելքում, բայց նորից հետ է մղվում: Սելջուկների վրա հենվելով՝ Մունթասիրը Բուրնամադ գյուղի մոտ պարտության է մատնում Կարախանյան իշխանին: Սակայն կարճ ժամանակ անց Մունթասիրի բանակը ջախջախվում է, իսկ նա շուտով մահանում Ամուդարիայի մոտ: Թուրք Կարախանյանների կողմից Միջին Արևելքի գրավումը սելջուկներին վատ իրադրության մեջ է դրում: Կարախանյանների արշավանքները ուղեկցվում էին Կաշգարից քոչվոր հորդաների արտահոսքով: Նրանց մեջ կարևոր դեր էին կատարում կարլուկները, յաղմաները և չիդիլները, որոնք տիրում էին Ամուդարյայի և Սիրդարյայի հոսանքների լավագույն արոտավայրերին: Թյուրք կարախանյանները իրենց են հնազանդեցնում ոչ միայն օազիսների, այլ նաև տափաստանային թյուրքալեզու ցեղերին:

11-րդ դարի սկզբին Կարախանյաներից կախման մեջ են ընկնում Զարավշանի և Նուբատիանական լեռների սելջուկները: Միջնադարյան հեղինակները կոնկրետ ժամանակ չեն նշում, թե երբ նրանք անցել են Միջին Ասիայի խաների տիրապետության տակ: Ակնհայտ է, որ նրանք միանգամից չեն ենթարկվել Կարախանյաններին և 999թ -ին Նասր իբն Ալիի կողմից Բուխարան գրավելուց հետո երկար ժամանակ անկախ են մնացել: Սելջուկները այդ ժամանակ երկու անկախ խումբ էին կազմում: Նրանցից մեկը գլխավորում էր Իսրայել իբն Սելջուկը, մյուսը՝ Մուսա (Մովսես)-բայղուն, Դավուդ Չողրի-բեկը և Մուհամմադ Տուղրիլ-բեկը:

11-րդ դարի սկզբին հենվելով Իսրայելի վրա՝ Ալի-Թեղին Կարախանյանը գրավում է Բուխարան: Միքայելի որդիները սկզբում պատերազմում էին

նրանց դեմ, իսկ հետո մտերմանում Ալի-Թեղինի հետ: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ Իսրայել իբն Սելջուկը ծերբակալվում է Մահմուդ Ղազնևիի կողմից և աքսորվում Հնդկաստան: 1018թ.-ին Ղազնևիների բանակը, հարձակվելով Ալի-Թեղինի տիրույթների վրա, ջախջախում է քոչվոր սելջուկներին Բուխարայի շրջակայքում և ցրում նրանց Միջին Ասիայի ու Խորասանի տարածքով: Իսրայելին հպատակ օղուզ-թուրքական հորդաներից մեկը Մահմաուդ Ղազնևիի կողմից ուղարկվում է Սերախսի, Աբիվերդի և Ֆերավի շրջակայք՝ նախկին Թուրքմենստանի տարածք: Մահմուդը նրանց պարտադրում է ծառայել բանակում, հարկեր վճարել հողերի և արոտավայրերի համար, որոնք նրանց տրվել էին Խարասանում: Սակայն Ղազնևի պաշտոնյաները հարկերը հավաքելիս այնպիսի ճնշման լին ենթարկում նոր հպատակներին, որ նրանք չհամբերելով 1027թ.-ին ապստամբություն են բարձրացնում: Մահմուդը Արսլան Ջազիբի գլխավորությամբ զորք է ուղարկում ապստամբությունը ճնշելու համար: Կռվի ընթացքում Յաղուբը, Բուկը, Ղզըլը և Կոկտաշը պարտություն են կրում և փախչում Դեհիստանի և Բալխանական սարեր: Այս պարտությունից հետո սելջուկների մի մասը գնում է Սպահան և Քերման, մնացած մասը, որի մեջ մեծ դեր էր կատարում Յաղուբը, թաքնվում է Մերձբալխանյան տափաստաններում:

Նկարագրված իրադարձությունների արդյունքում սելջուկների ցեղային միավորումը 11-րդ դարի առաջին եռամսյակում բաժանվում է մի քանի խմբերի: Նրանցից առաջինը՝ Մուսայի, Դավուդի և Մուհամմադի գլխավորությամբ, մնում է Միջին Ասիայում: Աբուլ Ֆազլ-Բայխակիի պատմելով՝ Նուրատական սարերից քոչեցում են Անդարազ՝ Խորեզմի սահմանների մոտ: Երկրորդ խումբը հայտնվում է Բալխանական սարի շրջանում, Մերձկասպյան արևմուտքում և Հյուսիսային Խորասանում: Երրորդ խումբը տեղափոխվում է Գորգանի, Ռեյի, Սպահանի շրջաններ՝ Իրանի հյուսիս-արևմուտքում: Հետագայում նրանք կոչվեցին «իրաքյան թուրքմեններ» հավաքական անունով[8]:

11-րդ դարի կեսին առաջացած սելջուկների պետությունը նկատելի հետք է թողել համաշխարհային պատմության մեջ: Այն կազմավորվել է օղուզ և թուրքմեն զանվածների ու Ղազնևիների միջև դաժան պայքարում Հյուսիսային Խորասանում: Սելջուկների տերությունը իր զարգացման շրջանում ներառում էր ամբողջ Միջին Ասիան, Իրանը, Աֆղանստանի, Անդրկովկասի, Առաջավոր և Փոքր Ասիայի մի մասը: Ինչ-որ ժամանակ հզոր այս պետության գոյության շրջանը բնութագրվում է մահմեդական երկրների ժողովուրդների նյութական և

---

[8] Кэзи Ка., Мусульманские мир 950-1150 вв. Кочевники и оседлые в средневековом мусульманском мире 1981г., 2

հոգևոր մշակույթում տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-տնտեսական նկատելի փոփոխություններով[9]: Սելջուկներին հպատակ շրջաններում տեղի է ունենում ֆեոդալական հարաբերությունների հետագա զարգացումը: Այս ժամանակաշրջանը բնութագրվում է ուրբանիզացիայի, տնտեսության և գյուղատնտեսական արտադրության, դրամաշրջանառության, առևտրի բնագավառներում տեղի ունեցող բարդ և բազմակողմանի պրոցեսներով: Սելջուկների հսկայական տերության կազմավորումը իր հետքն է թողել Արևելքի երկրների էթնոմշակութային պրոցեսների վրա[10]: 11-12-րդ դարերում զավթողական արշավանքներին ակտիվորեն մասնակցող թյուրքալեզու քոչվորները «թափվում են» Իրան, Անդրկովկաս, Հյուսիսային Աֆղանստան, Արաբական Իրաք, Փոքր Ասիա, Սիրիա և Պաղեստին: Համեմատաբար երկար ժամանակ միգրանտները հանդիսանում էին սելջուկների հենարանը: Դրանք հիմնականում Միջին Ասիայի և Ղազախստանի օղուզ-թուրքմենական տարրերն էին: Հետագայում նրանք ձուլվում են ինչ-որ չափով տեղական, մեծ մասամբ քոչվոր և կիսաքոչվոր բնակչության հետ: Սկսվում են բարդ էթնիկական պրոցեսներ, որոնք պատճառ են դառնում, որ Միջին Ասիայի, Իրանի, Սիրիայի տարածքում կազմավորվեն մի շարք թյուրքալեզու միավորումներ:

Փաստորեն, պատմական այս ժամանակահատվածում սելջուկ թուրքերը կայացել էին որպես ինքնուրույն ցեղամիավորում, որի կազմում, ճիշտ է, կային բազմատիվ ցեղեր: Եվ հենց այս ժամանակ սելջուկները սկսում են իրենց լայնածավալ արշավանքները, որոնց արդյունքում էլ ստեղծվում է սելջուկների հսկայածավալ պետությունը:

---

[9] Мелкумов Ю. А., Государство сельджукидов и Средняя Азия в XI-XII вв. М.: Наука, 1991, [illegible]

[10] Маркарян С. А. Общественно-политические изменения в Иране в XI в. при первых сельджуках. Автореферат канд. диссертации. Тбилиси, 1984, 35